Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ «_____» 2025թ. N-----Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Կասեցնել Երևան քաղաքի ավագանու՝ 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացված «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնության՝ Երևան քաղաքի ավագանու նիստում քննարկումը և քվեարկությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն նախագծով առաջարկվում է կասեցնել Երևան քաղաքի ավագանու՝ 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման (այսուհետ՝ N 95-Ն որոշում) գործողությունը՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ 2024 թվականի նոյեմբերի 11-ին մեկնարկած «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնության (այսուհետ նաև՝ Նախաձեռնություն) անհրաժեշտ ստորագրություններից ավելի քանակով ձևաթղթերը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին հանձնվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին, որը պետք է քննարկվի և քվեարկվի Երևան քաղաքի ավագանու նիստում՝ համաձայն կանոնակարգի 27-րդ կետի 3-րդ ենթակետի:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2025 թվականի հունվարի 1-ից: Ուստի՝ մինչ Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնության քննարկումը և քվեարկությունը, պետք է կասեցվի N 95-Ն որոշումը:

Ավագանու նիստում հնարավոր է ստեղծվի իրավիճակ, երբ Երևան քաղաքի ավագանին դրական դիրքորոշում ունենա Նախաձեռնության ներկայացրած նախագծի վերաբերյալ, և N 95-Ն որոշման կասեցումը հնարավորություն կտա ի սկզբանե դադարեցնել դրա գործողությունը՝ խուսափելով անցանկալի իրավիճակներից:

Մասնավորապես՝ առաջարկվող նախագծի չընդունումը կարող է անհարմարություններ ստեղծել տրանսպորտային միջոցներից օգտվողների համար, ովքեր հնարավոր է՝ ձեռք բերեն տարբեր փաթեթներ՝ նախատեսված N 95-Ն որոշմամբ, սակայն Նախաձեռնության նախագծի ընդունումից հետո այդ փաթեթները կիրառական չլինեն, որից վերջիններս զգալի վնասներ են կրելու:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվող նախագիծը պետք է քննարկվի և քվեարկվի անհապաղ՝ հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնությանը հազարավոր քաղաքացիների մասնակցության հանգամանքը, ինչպես նաև N 95-Ն որոշմանը վերջիններիս դեմ լինելը:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան